PRESS RELEASE

Policy Forum Armenia (PFA)
1250 I (Eye) Street N.W., Suite 710
Washington, D.C. 20005, USA
Contact: Ms. Irina Alaverdyan
E-mail: exrelations@pf-armenia.org
Web: http://www.pf-armenia.org

Օգոստոսի 3, 2010

Բանակի լեյտենանտ Արտակ Նազարյանի մահվան վերաբերյալ

Թերի կառավարումը և կոռուպցիան, որոնք վերջին տարիներին արմատներ են գցել հայկական բանակում, ևս մեկ մարդկային կյանք են խլել: Ադրբեջանին սահմանակից Տավուշի մարզում տեղակայված հրազենային դասակի հրամանատար, լեյտենանտ Արտակ Նազարյանին սույն թվականի հուլիսի 27-ին գտել են մահացած՝ բերանում արձակած փամփուշտից: Չնայած բժշկագիտական փորձագետը Արտակ Նազարյանի մարմնի վրա գտել է կյանքի համար վտանգ ներկայացնող վնասվածքներ, որոնք հասցվել են մահվանից ժամեր առաջ, պաշտոնական վարկածով որակավորվել է որպես ինքնասպանություն:

Policy Forum Armenia-ն սգում է Արտակ Նազարյանի կորուստը և այս անիմաստ ողբերգության պատասխանատվությունը դնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության վրա՝ բանակի զորամասերում նման մթնոլորտի առկայության համար, որը հանգեցնում է այս և նմանօրինակ այլ կասկածելի մահերի: Եթե այս վարքագիծը չփոխվի, նմանօրինակ դեպքերը կշարունակեն մթագնել հայկական բանակի հեղինակությունը հայ հասարակության մեջ:

Բանակը պետության պաշտպանն է: Նրանք, ովքեր մտահոգված են Հայաստանի՝ արտաքին վտանգներից պաշտպանվելու կարողությամբ, պետք է դատապարտեն այն, ինչ տեղի ունեցավ Տավուշում և պահանջեն լիարժեք հետաքննություն լեյտենանտ Արտակ Նազարյանի և վերջին տարիներին տեղի ունեցած նմանօրինակ մահվան պատճառների բացահայտման համար: Մենք պահանջում ենք, որպեսզի ՀՀ պաշտպանության նախարարությունը անաչառ հետաքննություն վարի հայ զինվորի կյանքի և արժանապատվության հանդեպ նման ոտնձգությունները բացահայտելու համար:

Հ.Գ. Մինչ այս նամակը պատրաստվում էր, լուրեր ստացվեցին Արցախում տեղակայված զորամասից մեկ այլ միջադեպի մասին , որ խլել էր վեց զինվորի կյանք: Ժամանակն է միավորվելու նման միջադեպերի պատճառները կանխելու համար: